

լիս, որ Հայաստանում գորգագործութեան մեջ տիրապետող է եղել հանգույցի, «կրկնակի», տեսակը: Բազմազան են կարպետներ գործելու եղանակները: Կարպետների պահպանման հնագույն /XVII - XVIII դդ./ նմուշների համադրումը XIX - XX դդ. օրինակների հետ հարավորութիւն է ցնձեռում որոշակի պատկերացում կազմելու կարպետ գործելու և դրանք գեղագործելու եղանակների մասին: Հայաստանում հիմնականում տարածված է եղել այսպես կոչված «,երկերես», կարպետի տիպը /պատկերները երկու կողմից հավասարապես դիտելի են/: Բացի դրանից, պատմական Հայաստանի գրեթե բոլոր պատմա-ազգագրական շրջաններում հայտնի են եղել կարպետ գործելու և գեղագործելու այսպես կոչված «,օղամիտ», և «,շուլալ կար», եղանակներն ու դրանց տարբերակները /պատկերները հասկերեն դիտվում են միայն մի կողմից/:

6. Այսպիսով, պարզվում է, որ XVIII - XX դդ. կենցաղավարած գորգագործութեան և կարպետագործութեան տեխնոլոգայի և տեխնիկայի ավանդույթների ակունքներն ունեն միջնադարյան ծագում:

Ա. Հ. ԳՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՆ ԵՎ ՄԳՈ ՀԱՆԻԵՐՁԱՆՔԻ ԲՆՈՒՑԱԳՐԱՆ ՓՈՐՁ

/ XIX դ. վերջ - XX դ. սկիզբ /

Հայ ազգագրութեան ուշագրավ և տակավին չլուսաբանված խնդիրներից է ժողովրդական մշակույթի բաղադրիչներից մեկի՝ ավանդութային տարազի տեսնապատկերի, մասնավորապես թաղման և սգո հանդերձանքի պատմա-ազգագրական ուսումնասիրությունը:

Ներկա հաղորդմամբ փորձ է արվում հրապարակի վրա եղած ազգագրական, հնագիտական, մատենագրական և բանահյուսական սակավաթիվ, բայց հույժ արժեքավոր նյութերը, հեղինակի Շամշադինի, Իջևանի, Սիսիանի շրջաններում և Լենինական քաղաքում 1983-1985 թթ. գրառած դաշտային ազգագրական նյութերի հետ համադրելու միջոցով, որոշակի պատկերացում տալ թաղման և սգո հանդերձանքի, դրանց առանձնահատկությունների և ցուրհանդեսների վերաբերյալ տարբեր պատմա-ազգագրական շրջաններում, բացահայտել առանձին զգեստների դերն ու նշանակությունը թաղման ծեսերի համակարգում:

1. Համաձայն XX դ. սկզբի ազգագրական նյութերի, Հայաստանի

բոլոր պատմա-ազգագրական շրջաններում թաղման հիմնական հանդերձն սպիտակ, նոր և շվաքված կտավ կտորից պատանքն է եղել: Բոլոր նըն- ջեցյալներին թաղել են՝ մեջքին կապելով պատանքի կտորից գոտի, որին հավանաբար ծիսական խորհուրդ և իմաստ է վերազրվել: Հանգուցյալների երեսը, բացառութամբ երեխաների, ծածկել են այդ կտորից խաչածև վարշամակով:

2. Հայաստանի շատ պատմա-ազգագրական շրջաններում երիտասարդ և շատ սիրելի ննջեցյալներին հազրել են ավյալ շրջանին հատուկ հագուստներ և ապա նոր միայն պատանքել, մինչդեռ մնացյալ ղեպքե- ռում շապիկ-վարտիկով, երբեմն էլ առանց դրանց են պատանքել և թա- ղել: Երիտասարդ շամուսնացած աղջիկների և տղաների, հատկապես նո- ռահարսնուրի և նուափեսաների հանդերձանքն առանձնահատուկ է եղել. նրանց թաղել են ամբողջական հանդերձանքով և զարդարանքով, քսո ո- ռում զգեստը պետք է լիներ գեղեցիկ և նոր: Ըստ ամենայնի, այդ սովորույթն արմատներով ձգվում է դեպի դարերի խորքը և, ինչպես պարզվում է, բնորոշ է շատ ժողովուրդներին:

3. Սոցիալ-ուսնեցվածքային էական տարբերությունները թաղման հանդերձանքում դրսևորվել են այն բանում, որ հարուստներն իրենց հանգուցյալներին ավելի համախ թաղել են ամբողջական տարազով, քնարելով նորն ու գեղեցիկը, մինչդեռ աղքատները համախ մերկ են թաղել, փաթաթելով սոսկ պատանքի մեջ: Երկու ղեպքում էլ հանգու- ցյալի պարտադիր հանդերձ պատանքն է եղել: Որոշ շրջաններում, երբեմն պատանքը դրել են հարուստ ննջեցյալի գլխի տակ:

4. Ազգագրական և որոշ բանահյուսական նյութերում պահպանվել են հանգուցյալին հանդերձավորելու և պատանքը կարելու հետ կապ- ված հիևավուրց սովորույթներ: Գոյություն են ունեցել սեռատարի- քային որոշակի սահմանազատումներ. տղամարդկանց պատանքը կարել են միայն տղամարդիկ, որոշ ղեպքերում, գոտկամասից վեր կարց շա- ռուևակել են տարեց կառայք, իսկ երեխաների և կանանց պատանքը կա- րել են միայն կառայք: Համընդհանուր տարածում է ունեցել ննջեց- յալի հագուստների վրա լաց ու կոծի սովորույթը:

5. Հայաստանի բոլոր շրջաններում կենցաղավարել է ննջեցյա- լի զգեստների բաշխումը, որը տարածել են բոլոր սեռատարիքային խմբերի վրա: Հանգուցյալի շորերը լվացել և բաշխել են թաղման երրորդ կամ յոթերորդ օրը, ներքնագգեստը և ապանելիքը, ինչպես և մի քանի հացած շորեր բաժին է հանվել լողացնողներին և գե- րեզմանահատներին, մնացած զգեստների և գլխի հարդարանքի մեծ մա- սը՝ քահանային: Դարելի է ենթադրել, որ ննջեցյալի զգեստների

բաշխումն ինչ-որ կերպ առնչվել է զոհաբերութեան հիմնավորը, վաղուց իմաստափոխված սովորույթի հետ, մյուս կողմից՝ թելադրված է եղել հանգուցյալի հետ կապված յուրաքանչյուր իրի վնասաբեր ազդեցութիւնները գերծ մատուցել միտումով:

6. Անցյալ հարյուրամյակում և ներկա դարի սկզբներին սգո հանդերձը մայրց մեջ սև գույնի է եղել, որի վաղ անցյալում գործածութեան մասին տեղեկութիւններ կան միջնադարյան մասնագրութիւնում: Թաղման ժամանակ ամբողջովին սև են հագել հանգուցյալի մերձավոր և հարազատ կանայք, մայրը, կիսը, որոնք սևագետ են մնացել առնվազն մեկ տարի, իբրև սգո նշան տղամարդիկ չեն սափորվել, իսկ մասունում սուգն արտահայտվել է նրանով, որ տղամարդկանց գոկը շուտ են ավել, վրան սև գլխաշոր-փուշի փոխելով: Ազգաց սերբն ծառայել է նաև այն հագուստը, որ հանգուցյալի հագին է եղել մահաալիս, իհարկե, հանելով բոլոր տեսակի զարդարանքները:

7. Եիսական հանդերձանքի թաղման և սգո տարբերակների դիտարկումից պարզուրում է, որ թաղման համանի ծեսերի համակարգը, հանդերձալ կյանքի վերաբերյալ եղած վաղնշական պատկերացումները, ենթադրել են միայն այդ ծիսակարգին հատուկ հանդերձ, մյուս կողմից՝ առօրյա հագուստներ, որոնց հարդրել են ծիսական իմաստ: Թաղման և սգո հանդերձանքի հետագա համապարփակ ուսումնասիրութիւնը հարավորութիւն կընծնուի բացահայտելու առանձին տարազամասերի դրսևորումները թաղման ծիսակարգում և, վերջին հաշվով, վերականգնելու զգեստի հագուցն տարբերակները:

Ն. Հ. ՄԱՌԻԱՐԻ

ԱԻ

ՔՐԴԱԿԱՆ , ԷՅ, ՔԱՅ ԹՈՂ, , ԳՐԵՐԳԻ ՏՄԲԵՐԱԿՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

1. Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում եղած ծայնագրութիւններում առկա են ժողովրդական երգերի ու նվագների ազգական տարբեր կապերով իրար հետ առնչվող բազմաբնույթ տարբերակներ: Դրանց ուսումնասիրումը հարավորութիւն է ընծնում մեկնաբանելու ժողովրդական երաժշտութեան զարգացման ցնդհանուր գործընթացն ու փոփոխութիւնները, ինչպես նաև բացահայտելու ազգային երաժշտութեան բնորոշ երևույթները:

2. Խոսքերի բովանդակութեամբ, երաժշտական լեզվով ու կա-